ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 490-Ա

03 սեպտեմբերի 2025 թ.

ՋԱՆԻԿ ԲԱԶԵՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ «TOYOTA CAMRY 2.5, ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇ՝ 022 HJ 61» ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2025 թվականի մայիսի 30-ի N 552-Ա հրամանը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանին 2025 թվականի սեպտեմբերի 3-ին, մեկ օրով, գործուղել Ճամբարակ համայնքի Շորժա բնակավայր՝ «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարի նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում հաշվառված՝ աշխատակազմին սպասարկող «TOYOTA CAMRY 2.5» մակնիշի ավտոմեքենայի (նույնականացման համար՝ JTNBF4FK703029402, պետական հաշվառման համարանիշ՝ 022 HJ 61) շահագործումը և նյութական պատասխանատվությունը 2025 սեպտեմբերի 3-ին վերապահել Ջանիկ Բազեյանին:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները՝ վճարելով միայն օրապահիկ:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Մկրտիչ Ղազազյանին՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

03.09.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ